



Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ
ԼՂՀ դպրոցականների VI սպարտակիադայի ծրագրով աղջիկների և պատանիների միջև բասկետբոլի առաջնության

1. Նպատակը և խնդիրները

- բասկետբոլի մասսայականացումը հանրապետությունում,
- մարզիկների վարպետության բարձրացում ,
- առողջ ապրելակերպի քարոզում,
- ուժեղագույն մարզիկներին բացահայտում` ՀՀ դպրոցականների մարզական խաղերի եզրափակիչ փուլին մասնակցելու համար ԼՂՀ պատանիների ու աղջիկների հավաքական թիմերը համալրելու համար:

2. Առաջնության անցկացման վայրը և ժամկետը

Առաջնությունը անց է կացվելու Ստեփանակերտ քաղաքի հմ.6 հիմնական դպրոցի մարզադահլիճում:

Աղջիկների միջև` մարտի 9-13-ը:

Պատանիների միջև` մարտի 16-20-ը:

Մարտի 9-ին և 16-ին մարզիչ ներկայացուցիչների հավաք ԼՂՀ կրթության և գիտության նախարարության շենքում/այսուհետ` նախարարություն/ ժամը 17.00-ին:

3. Առաջնության մասնակիցները

Առաջնությանը թույլատրվում է մասնակցել Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական, միջին մասնագիտական ու արհեստագործական ուսումնական հաստատությունների հաղթող և շրջանների աղջիկների ու պատանիների հավաքական թիմերին: Թիմերի կազմը` 10-ական մարզիկ և 1 մարզիչ-ներկայացուցիչ:

Մրցումներին իրավունք ունեն մասնակցել 1998 թ. ծնված և ցածր տարիքի աղջիկներ և պատանիներ:

3. Առաջնության անցկացման կարգը

Առաջնությունը անց է կացվելու խմբային եղանակով: Երկու խմբերի 1-ին տեղեր գրաված թիմերը խաղալու են 1-ին և 2-րդ տեղերի համար, 2-րդ տեղեր գրաված թիմերը` 3-րդ և 4-րդ տեղերի համար: Թիմերի տեղերը որոշվելու են միավորների առավելագույն քանակով: Հաղթանակի համար տրվում է 2, պարտության դեպքում 1, չներկայանալու դեպքում 0 միավոր:

Թիմերի հավաքած միավորների հավասարության դեպքում առավելությունը տրվում է.

ա/ այդ թիմերի հանդիպումներում առավելագույն միավորներ վաստակած թիմին.

բ/ գնդակների լավագույն տարբերություն ունեցողին.

Չհայտավորված խաղացողի հայտնաբերման դեպքում թիմին գրանցվում է պարտություն, անկախ փաստացի արդյունքից:

Հանդիպման զույգի մարզաշապիկների գույների համընկնման դեպքում դաշտի տեր համարվող թիմը փոխում է մարզաշապիկը: Դաշտի տեր է համարվում զույգի առաջինը նշված թիմը:

4. Առաջնության ղեկավարությունը

Առաջնության ղեկավարությունը իրականացնում են նախարարության ՌՀ, ՖԴ և ՀԿՀԿ բաժինը, իսկ անմիջական պատասխանատվությունը դրվում է նախարարության կողմից հաստատված մրցավարական հանձնախմբի վրա:

5. Մասնակիցների ընդունման կարգը և ծախսերը

Առաջնության մասնակիցների սննդի, գիշերավարձի, ճանապարհածախսի, մրցավարների և սպասարկող անձնակազմերի օրապահիկների վճարման, հաղթողների պարգևատրման ծախսերը հոգում է նախարարությունը:

6. Պարգևատրումը

Առաջնությունում 1-ին, 2-րդ, 3-րդ տեղեր զբաղած թիմերը կպարգևատրվեն նախարարության համապատասխան կարգի դիպլոմներով, իսկ թիմերի անդամները՝ մեդալներով: Կպարգևատրվեն նաև մրցավարական հանձնախմբի կողմից լավագույն մարզիկներ ճանաչված մեկական աղջիկ և տղա:

8. Հայտերը

Առաջնության մասնակից թիմերի անվանական հայտերը երկու օրինակից ներկայացվում են մանդատային հանձնախմբին ժամանման օրերին՝ մարտի 9-ին և 16-ին:

Սույն կանոնակարգը հանդիսանում է առաջնությանը մասնակցելու պաշտոնական հրավեր:

Ծանոթություն.

ա. Թիմերի մարզիկները իրենց հետ պետք է ունենան ծննդյան վկայականների պատճենները՝ համապատասխան ուսումնական հաստատության տնօրենի ստորագրությամբ և կնիքով:

բ. Մարզադահլիճում մարզիչ-ներկայացուցիչների ներկայությունը մարզահագուստով պարտադիր է:

Նախարարության ռազմահայրենասիրական, ֆիզիկական դաստիարակության և հասարակական կազմակերպությունների հետ կապերի բաժին